ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԿՈՐՅՈՒՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Շենգավիթի 7-րդ փողոցը (սկսվում է Ներքին Շենգավիթի 11-րդ փողոցից, հասնում՝ Շահամիրյանների փողոց) անվանակոչել ԽՍՀՄ ժողովրդական ճարտարապետ Կորյուն Հակոբյանի անվամբ՝ «Կորյուն Հակոբյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ **ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԿՈՐՅՈՒՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կորյուն Հակոբյանը ծնվել է 1908 թվականին օգոստոսի 5-ին, Ալեքսանդրապոլում:

Վաղ հասակում ծնողների հետ տեղափոխվել է Թիֆլիս, որտեղ էլ ավարտել է միջնակարգ դպրոցը, այնուհետև վերադարձել է Հայաստան:

1932 թվականին ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը: Ուսումնառության տարիներին աշխատել է Կարո Հալաբյանի կողմից ստեղծված «Գիպրոգորում» առաջին նախագծային կազմակերպությունում: 1937 թվականին Հակոբյանը նշանակվել է Երևանի գլխավոր ճարտարապետի տեղակալ և պաշտոնավարել է մինչև 1947 թվականը: 1941 թվականի հունիսի 22-ին Հակոբյանը մեկնել է ռազմաճակատ: 1943 թվականին վնասվածք է ստանցել և վերադարձել Երևան:

1955-1989 թվականներին եղել է «Հայպետնախագիծ» ինստիտուտի տնօրեն (1964-1967 թվականներին՝ ՀԽՍՀ Պետշինի նախագահի տեղակալ):

Կորյուն Հակոբյանի նախագծերով Երևանում կառուցվել են «Դինամո» մարզադաշտը (այժմ՝ «Հանրապետական», 1948), բնակելի տներ (1947-1949) Ամիրյան, Տերյան, Թումանյան փողոցներում, Հ. Պարոնյանի անվան դպրոցը (1949), առողջապահության նախարարության IV հիվանդանոցը (1963), «Դինամո» մարզասրահը (1965, Ն. Ալավերդյանի հետ), «Հրազդան» մարզադաշտը (1971, ճարտարապետ Գ. Մուշեղյանի և կոնստրուկտոր Է. Թոսունյանի հետ, ՀՀ պետական մրցանակակիր 1979), Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրը (1984, ճարտարապետներ Արթուր Թարխանյանի, Սպարտակ Խաչիկյանի, Գևորգ Մուշեղյանի, Հրաչյա Պողոսյանի, կոնստրուկտորներ Գ. Ազիզյանի և Ի. Ծատուրյանի հետ, ԽՍՀՄ պետական մրցանակակիր 1987):

Կորյուն Հակոբյանը մահացել է 1994թ. Երևանում:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետը՝ առաջարկվում Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Շենգավիթի 7-րդ փողոցն անվանակոչել ԽՍՀՄ ժողովրդական ճարտարապետ Կորյուն Հակոբյանի անվամբ՝ «Կորյուն Հակոբյան փողոց»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ **ՆՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ**